

[illegible]

[illegible]

264.28.1.6

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

ՍՐԲՈՅ

ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ
ԵԿԵՂԵՑԻՈՅ

Համեմատ օրինակին տպելոյ ի Հռովմ 1676



ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1885

11-21849 ml

Արժան լիցին արքայութեան.
որք աստ յաւէտ զնա խոտ կան։

ԺԱՄԱՄՈՒՏՔ

ըստ կարգի աւուրց պահոց

տօնից տերունականաց և ամենայն սրբոց։

Պահոց։

Որ 'ի Հօրէ առաքեցար փրկիչ և մարմնացար 'ի Սուրբ Կուսէն, որ վասն մեր 'ի յերկնից իջեր, և լուսաւորեցեր զտիեզերս, զխաղաղութիւն քո տուր մեզ տէր, որ խաղաղութեանց ես թագաւոր. զխաղաղութիւն և զողորմութիւն, որ յամենայնի ես դու կարող մարդասէր։

Զոչէ՛ զաբ՛ռնէ՛ Ո՛ր՛բ՛ռնոռ։

Որ ըստ ամենայն միտս անցանես, զխաղաղութիւն քո Աստուած տուր մեզ Հանապազ՝ զքեզ աղաչեմք։

Մարտիրոսաց։

Ի տաճարի սրբոց, և յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս Համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա և աղօթիւք վկենդանութիւնս մեր խաղաղացո՛ Աստուած՝ որպէս մարդասէր։

Ճգնաւորաց։

Ճգնաւորք Քրիստոսի, որք տանջանաց անօրինացն համբերեցիք, և զմոլութիւն կռոցն խափանեցիք, դասաւորեալք ընդ հրեշտակս 'ի յերկինս. որք ունիք զհամարձակութիւն 'ի Քրիստոսէ, բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր, զձեզ աղաչեմք։

Կէ՛ր-ուՀէ։

Միածին որդի և բանդ Աստուած և անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ 'ի սրբուհւոյ աստուածածնէն և 'ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած. մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ 'ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյն, կեցո՛ զմեզ։

Ստեփանոսի։

Ցնծա՛ այսօր, ցնծա՛ և զուարճացիր կաթուղիկէ սուրբ, յիշատակաւ սրբոյն Ստեփանոսի նախավկային Քրիստոսի՝ վկայեցելոյ հօր. որ աղօթիւք բանայր զերկինս, զոր փակեաց ադամ, և հրեշտակակերպ տեսլեամբ տեսանէր զկերպարանն հօր 'ի կերպի ադամայ նստեալ յաթոռ փառաց. որ ըզբաղմութիւն քարանցն որպէս զծաղիկս հաւաքելով բոլորեր պսակս փոխանակ փշոյն և եղեգանն. և զմարտիրոսական արիւնն խառներ ընդ փրկական արեանն Քրիստոսի՝ հոսեցելոյն 'ի կողէն։ Վասն որոյ գերազանցեալ 'ի փառս առաւել քան զամենայն սուրբս՝ հայցեա՛ և մեզ 'ի վերնատուղէն զպարգևս կենաց անվախճանից՝ և զմեծ զողորմութիւն։

Ստեփանոսի։

Յորովայնէ ընտրեալ՝ սուրբ Ստեփանոս, յորովայնէ ընտրեալ՝ սուրբ Ստեփանոս, վկայ ճշմարիտ առաքելական քարոզութեանցն. որ 'ի վերայ անօրէն քարաձգողացն աղօթէիր առ Քրիստոս Աստուած՝ մի համարիր սոցա զայս 'ի մեղս. 'ի ձեռն սորին բարեխօսութեանն շնորհեա՛ մեզ զմեծ քո զողորմութիւն։

Ծննդեան։

Աստուածածին անհարանոցեալ, զբանն անսկիզբն յղացար, և զԱստուածն անիմանալին ծնար, զանպարագրելին 'ի գիրկս քո բարձեր, նմա անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց։

Ծննդեան։

Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքն բազմաչեայք և աթոռք հրանիւթք և վեցթևեան սերովբէքն նայիլ ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապականութեան 'ի յարգանդի քում՝ որպէս աղախին զտեր, և ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից զմարմնացեալն առ 'ի քէն՝ զանձառ զբանն, 'ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց։

Ծննդեան։

Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ աստուածածին, բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ, և սուրբ հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամենայն գոյութեանց զտեղծիչն

յղացեալ ծնար անձառապէս, մարմնացելոյն առ 'ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր։

Ս. Դ-ԷՆ։

Ծերունին այսօր Սիմէոնն՝ հոգւոյն գայլ 'ի տաճարն, երևելով քերովբէիցն վեհագոյն. որոց թևօքն սաւառնեալ ոչ իշխէին նայիլ 'ի յահեղ փառացն, սա 'ի գիրկս իւր բարձեալ համբուրեր համարձակապէս, և գգուէր որպէս զմանուկ, և աղերսելով հայցէր արձակիլ 'ի խաղաղութիւն։

Տ-ՆԸՆԴՀԱՆՈՒՆ։

Անսկզբնական բանդ Աստուած 'ի վերջին աւուրս յանձն առեր լինել մարդ 'ի կուսէն, և արարիչդ յաւիտենից փակեցար ընդ ժամանակաւ. սուրբ Տէր սրբութեանց, և անկարօտ մաքրութեանց, եկիր 'ի տաճարն քառասնօրեայ զօրինացն կատարեցեր զարդարութիւն. զոր բարձեալ Սիմէոնի զանպարագրելիդ 'ի գիրկս իւր՝ հայցեր. որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա զիս 'ի խաղաղութիւն։ Վասն որոյ ընդ ծերունւոյն Սիմէոնի վերագոչեմք առ քեզ Տէր. սուրբ սուրբ սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառաք քո, 'ի փրկութիւն մեզ՝ Քրիստոս Աստուած. փառք քեզ։

ԶՀրականաց։

Զօրական և վկայ Ճշմարիտ՝ քաջ նահատակդ Քրիստոսի Թէոդորոս, որ փոխանակեցեր զմարմնդ ընդ հոգւոյդ քում փրկանս, և ոչ ածեր զմտաւ զսպառնալիսն Մաքսիմիանոսի Թագաւորին. այլ վերին աղաչեցութեամբն՝ դիտելով զայրեցումն

հոգւոց նոցա, վասն այնորիկ լուցեր զտաճար կռոց նոցա։ Արդ՝ 'ի յաղթող պատերազմի տօնողացս զօր նահատակութեան քոյ՝ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց։

Քառասունն մանկանցն մարտիրոսաց։

Գնալով փառաց քոց 'ի փառս կաթուղիկէ եկեղեցի, դիմեալք 'ի Սեբաստիա վերին, ուր թագաւորեալքն յԱստուծոյ նահատակին 'ի յամօթ և 'ի քարընկէց յերեսս բանսարկուին, քաջալերելով զմիմեանս՝ զի մի լուծեալ ոք բաղանեաց անցաւորիս՝ պակասեսցի. այլ գողալով առաքինաբար զինքն ըղերձեալ յանիւս աստուածային գանձուցն հոլովիցի, աղաղակելով առ Քրիստոս՝ ընկալ զորդեգրութիւն ժողովոյս մերոյ 'ի յոյս սիրողաց քոց. տէր փառք քեզ։

Ղազարու։

ԶՂազարու զնոջումն որպէս կանխագէտ յառաջ ասէիր. զի և 'ի Բեթանիա յառաջէիր, զի յարուցես զսիրելին քո. և քեզ գոչելով ասեմք՝ օրհնեալ որ գաս 'ի չարչարանս կամաւ Հօր 'ի փրկութիւն անձանց մերոց։

Ղազարու։

Յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն Ղազարու, յորժամ եկեալ կենարարն 'ի գերեզմանն Ղազարու, աւետաւոր ձայնիւն աղաղակեր ասելով. Ղազարէ, արի՛ Էկ արտաքս։ Իսկ մեռեալն 'ի գերեզմանէն յարեաւ. և նոյն ինքն զանմահութեան պարգևսն ետ սիրելւոյն. և աստուածային ձայնիւն 'ի գերեզմանէն կոչեաց. վասն որոյ և մանկունք ե-

երայեցւոց՝ ոստովք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո. ովսաննա օրհնեալ է գալուստ քո՝ օրհնութիւն 'ի բարձունս. օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն։

Ծաղկաղարդէն։

Ցնծա՛ Երուսաղէմ, և զարդարեա՛ զառագաստ քո Սիովն, քանզի ահա թագաւոր քո Քրիստոս նստեալ 'ի յաւանակի նորոյ հեզութիւն ցուցանելով, և գայ մտանէ յառագաստ քո Սիովն. և մեք աղաղակեմք՝ ովսաննա օրհնեալ եկեալ 'ի յանուն Տեառն, որ ունի զմեծ զողորմութիւն։

Զատիկն։

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց, և յարութեամբ իւրով մեզ կեանս պարգևեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն։

Յինանցն։

Ամենաւոր և սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ. որ անսկիզբն 'ի հօրէ անձառաբար՝ մարմնացաւ 'ի կուսէն, խաչի համբերելով, և կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգևեաց շնորհս։

Յինանցն։

Քանզի յարեաւ 'ի մեռելոց Քրիստոս Աստուած յաւիտենից արարիչ և յարութիւն աղգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց և ամենայն զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք՝ փառք սոսկալի յարութեան քո Տէր։

Համբարձման։

Հիացան վերնական բազմութիւնքն տեսանելով զքեզ 'ի հրեղէն կառս բազմեալ՝ սարսեալ ասէին, ովք է սա՝ որ գիմեալ գայ յերգովմայ, և եկեալ մտանէ փառաւք 'ի փառս. Տէր փառք քեզ։

Համբարձման։

Որ յանպատում յաթոռ նստիս և յանմարմնոց վերաբերիս, անհասանելի բանդ Աստուած, 'ի յերկրի երևեցար ձիմարիտ մարդ՝ զանօրէնութեանն կատարեալ զխորհուրդ. խաչի և մահու համբերեցեր, և զհրաշալի զյարութիւնդ քո ցուցեր հզօր զօրութեամբ. այսօր համբարձար փառաւք 'ի յերկինս, և զկուսածին զմարմնդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր. զոր տեսեալ Եսայիաս՝ նապատմեալ ասէր. ովք է սա՝ որ գիմեալ գայ յերկրէ. հիացեալ պետութեանց երկնից՝ գոչէին առ միմեանս. համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր, և մտցէ թագաւոր փառաց։ Այլ որ յամենայնի կարողդ ես և հզօր, շնորհեա՛ և մեզ հանգիպել քեզ ամպովք 'ի միսանգամ քո գալստեանդ, որ միայնդ ես մարդասէր։

Հոգւոյ գալստեան։

Աստուած զքեզ խոստովանիմք զսուրբ հոգիդ և երկիրպագանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղելոցս և խաղաղարար աշխարհի. որ զոր գիտութիւն աշակերտացն բազում գիտութեամբ լցեր. և 'ի հրեղէն լեզուս բաժանեալ անձառելեաւ ցուցար նոցա. աղաղակեմք՝ Տէր, խնայեա՛ և կեցո՛ զմեզ։

Երկոտասներորդ։

Այսօր 'ի հրեղէն լեզուս բաժանեալ հանդերձ յառաքեալսն լուսաւորելով զնոսա. և այժմ աղաչեմք զքեզ սուրբ Աստուած, որ ես պատճառ կենդանութեան եղելոցս և խաղաղարար աշխարհի, խնայեա՛ և կեցո՛ զմեզ։

Երեքտասներորդ։

Վասն որոյ և մեք զհոգին սուրբ ընդ հօր միաւորեալ, և ընդ որդւոյ միասնական խոստովանիմք. և հայցեմք 'ի վերնատուղէդ մեզ զհոգևորական զխաղաղութիւնդ. Տէր փառք քեզ։

Հոգեպսխեանց։

Որք ծագեցան մեզ յարևմտից որպէս զարեգակն, և լուսաւորեցին համանգամայն զաշխարհս Հայաստանեայց, փարատեցին զխաւարն անգիտութեան կռապաշտութեան, և լուսաւորեցին զամենայն հոգի հաւատով աստուածագիտութեան. սոցա բարեխօսութեամբն Քրիստոս Աստուած, պարգևեա՛ աշխարհի քում զխաղաղութիւն, և անձանց մերոց զմեղաց զթողութիւն՝ որպէս մարդասէր Տէր։

Գայլեանեանց։

Զյաղթական զձեր զհանդէս զուարճացեալ տօնէ եկեղեցի սուրբ. քանզի սրբութեամբ ստացայք զկուսութիւն, և 'ի մարմնի զանմարմնոցն ցուցէք զհանդէս։

Կոստանայ։

Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսային, դստերք վերին սիոնի, խնդրեցէք 'ի Քրիստոսէ զհաշտութիւն և զմեծ զողորմութիւն։

Յովհաննու Պրոչին։

Զյառաջընթացութիւն քո և զկարապետութիւն Աստուծոյ բանին խափանել կարծելով, որ 'ի ձեռն կնոջն զնախաստեղծն 'ի դրախտէն արտաքս ընկէց, նաև այժմ զհերովդիադա անօրէնութեամբ բորբոքեալ, և բազմելոցն հերովդիայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հաճոյացոյց, զի զքոյդ հատցէ զգլուխ, որ զամենեցուն ձեռնադրեցեր զքեզ զԲրիստոս։ Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա՛ որում ձեռնադրեցեր, պարգևել զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն։

Մարգարէից։

Տէր՝ որ հիմնեցուցեր զեկեղեցի քո 'ի վերայ վիմին հաւատով, և կարգեցեր 'ի սմա առաքեալս՝ և մարգարէս, հովիւս և վարդապետս՝ առ 'ի հաստատութիւն սրբոց. և ձգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. 'ի խաղաղութեան զսա պահեա՛ Աստուած որպէս մարդասէր։

Աւետեաց։

Առաքեալք և վկայք Քրիստոսի Աստուծոյ, ամենակալ հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդեգրութիւն կենաց կոչելով՝ միասնական սուրբ երրորդութեանն յորդորեցին երգել փառս 'ի յաւիտեանս. ամէն։

Հայրապետաց։

Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ՝ի յերկրի, առաքելական առեր զպատիւ յերկնուստ՝ ծառայ Քրիստոսի ով երանելիդ՝ի հարս սուրբ հայրապետ. քանզի քոյ վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով. վասն որոյ բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց։

Եկեղեցւոյ։

Զխաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյ քումմ սրբոյ, զխաղաղութիւն և զանշարժութիւն՝ի թշնամեաց պատերազմ. և հաստատեա՝ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր և Աստուած, կեցո՛ զմեզ։

Վարդավառն։

Երևի Տէր այսօր աշակերտացն՝ի թաբօրական լերինն, և աշակերտացն զարհուրեալ աղաղակեին ասելով, արասցուք երիս տաղաւարս, մի Տեառն, և մի Մովսէսի, և մի Եղիայի։ Եւ մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քո Աշմարիտ վկայիցդ. առաքեա՝ի մեզ զլոյս քո շնորհացդ՝ի քոյ միսանգամ գալստեանդ, և կեցո՛։

Խաչի։

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով, և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։ Եւ այժմ վասն

սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի։

Ուրբաթն որոտման։

Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից՝ի յերկիր՝ կոչելով յորդեգրութիւն զձեզ որդիք սիրելի, հաստատութիւն հաւատոյ, և պարծանք եկեղեցւոյ. որք ցօղով արեան ձերոյ՝ մաքրեցիք զտիեզերս յանօրէն կռապաշտութեանց։ Արդ՝ հայցեցէք՝ի Քրիստոսէ զքաւութիւն տօնողացս անուան ձերոյ։ Մաղթանօք սոցա Տէր խնայեա՝ի փրկեալ քո ժողովուրդս, որ միայնդ ես մարդասէր։

Հրեղէնաց։

Զոր օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի զօրութիւնք, երկնաւոր նահապետութիւնք, հրեշտակք և հրեշտակապետք, աթոռք և տէրութիւնք, իշխանութիւնք և պետութիւնք, սերովբէք և քերովբէք զամենասուրբ զՊրորդութիւնն, և զմի աստուածութիւն։

Հրեղէնաց։

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քահանայապետութիւն ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետութեանցն կատարելով զտօնախմբութեան տօնս, անմարմնական դասուց հոգեղինացդ՝ մարմնականքս և հողեղէնքս. ով սուրբ Գաբրիէլ և Միքայէլ մեծք, հրեշտակապետք բարձրելոյն, որք կայք առաջի աթոռոյ աստուածութեանն, անդադար բարեխօս լերուք վասն մեր առ Տէր, վերաբերել զամենեսեան ընդ ձեզ յերկնից արքայութիւնն, և միաձայն բարբառով երգել զփառս։

Գրիգորի Լուսաւորչին։

Գրիգոր սուրբ քահանայապետ, որ զհաւատս ուսուցեր, և զբանակս դիւացն հալածեցեր, մարդկան ուսուցեր քարոզել զերրորդութիւնն, պսակեցար յարքայութեանն, արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր։

Երից Մանկանցն։

Որ 'ի վերայ քերովբէիցն հանգչիս, և 'ի զօրացն հրեղինաց օրհնաբանիս, իջեր 'ի բաբելոն, և փրկեցեր զերիս մանկունսն 'ի հրոյն բռնութենէ. որք աղաղակելով գոչէին երգ նոր՝ Սմենայն գործք օրհնեցէք և բարձր արարէք։ Թագաւոր փառաց Քրիստոս և արարիչ բոլորից, որ մարգասիրապէս գթացար 'ի սուրբ մանկունսն, փրկեցեր 'ի բորբոքեալ բոցոյն. որք անարգեցին զբռնութիւն թագաւորին, և շինջուցին զզօրութիւն հրոյն. ընդ նոսին և մեք քեզ վերագոչեմք, փրկեա զմեզ 'ի հրոյն յաւիտենից. զի դու միայն ես բազմագութ Տէր. քեզ փառք յաւիտեանս. ամէն։

ՕՐԷՆՔ ԱՐԿԱՆԵԼՈՅ

ՍՊԱՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել, պարտ է այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ։

Մտցէ յաւանդատունն, հանդերձ սարկաւագօքն, ուր զգեստքն են պատարագի։ Եւ զգեցեալ պաշտօնեիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի, ասասցեն ապա սաղմոս. ՃԼԱ։

Կոչդ։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Փոխ։

Յիշեա՛ Տէր զԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։

Որպէս երդուաւ Տեառն, և ուխտս եդ Աստուծոյ Յակովբայ։

Թէ ա՛չ մտից 'ի յարկս տան իմոյ, եթէ ելից յանկողինս մահճաց իմոց։

Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նիրհ արտեւանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց, մինչև գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակովբայ։

Ա՛հա լուաք զնմանէ յԵփրաթայ. և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց։

Մտցուք 'ի յարկս նորա. երկիր պագցուք 'ի տեղւոջ՝ ուր կացեալ են ոտք նորա։

Արի՛ Տէր 'ի հանգիստ քո, դու և տապանակ կտակի սրբութեան քոյ։

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Վասն Դաւթի սիրելւոյ քոյ, մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ։

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ, և ոչ ստեաց նմա. 'ի պտղոյ որովայնի քոյ նստուցից յաթոռ քո։

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ և զվկայութիւնս իմ՝ զոր ուսուցից նոցա։

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո։

Հաճեցաւ Տէր ընդ Սիոնի, և ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, 'ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա։

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից, և զաղքատս սորա լցուցից հացիւ։

Քահանայից սորա զգեցուցից զփրկութիւն, և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։

Անդ ծագեցից զեղջիւր Դաւթի, պատրաստ աբարից զձրագ օծելոյ իմոյ։

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, այլ 'ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Ե- դարձեալ տրիսագն։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր։ Սմենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա։

Ե- տասցեն երկրպագան

Տէր ողորմեա։

Ե- դանդաղն տասցէ պաղծեալս։

Որ զգեցեալ ես զլոյս որպէս զհանդերձ, Տէր մեր Յիսուս Քրիստոս, անձառելի խոնարհութեամբ 'ի յերկրի երևեցար, և ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի, և զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ, Տէր ամենակալ, որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ, արժանի արա և զիս 'ի ժամուս յայսմիկ զանսպիտան ծառայս քո, որ համարձակիմ և մերձենամ 'ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց։ Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որք են հանդերձք պղծութեան, և զարդարեցայց լուսով քով։ Ընկեա յինեն զչարիս իմ, և թօթափեա զյանցանս իմ. որպէս զի արժանի եղեց հանդերձելոյ լուսոյդ առ 'ի քէն։ Շնորհեա ինձ քահանայական փառօք մնանել 'ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո։ Զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առագաստիդ ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ Քրիստոս, որ բարձեր զմեղս ամենեցուն, զի դու ես սրբութիւն անձանց մերոց. և քեզ բարերարիդ Աստուծոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե- մատուցեալ սարկաւագունքն զգեցուցանեն նմա զհանդերձն սաղմոսով։

Ե- դէպ յա-ալ ղէոյրն 'ի գլ-խն, և տասցէ։

Դիր Տէր սաղաւարտ փրկութեան 'ի գլուխ իմ, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամւոյն։ Շնոր-

11-27849ա.ա

հոգ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Շաղկէն։

Զգեցո ինձ Տէր հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան, և շուրջ պատեա զգեստուն փրկութեան։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Գ.օպոն։

Շուրջ պատեսցէ կամաբ հաւատոյ զմէջս սրտի իմոյ և մտացս, և շինջուսցէ 'ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս. և զօրութիւն շնորհայ քոյ յամենայն ժամ բնակեսցէ 'ի սոսա։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Բաղդանէն։

Տուր Տէր զօրութիւն ձեռին իմոյ, և լուա զամենայն աղտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ո-րարէն։

Զգեցո Տէր պարանոցի իմոյ զարդարութիւն, և սրբեա զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղայ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Նոփորդէն, որ է շուրջառն։

Տէր՝ ողորմութեամբ քով զգեցո ինձ զգեստ

պայծառ, և պարտպեա ընդդէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յետ պէտոպաորելոյ որբ-ալան պէտոպոն՝ ասէ։

Ցնծասցէ անձն իմ 'ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան։ Իբրև փեսայի եդ ինձ պսակ, և որպէս զՀարսն՝ զարդու զարդարեաց զիս։ Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ՅԵՏ ԶԳԵՆԼՈՅ

ՍՐԲՈՒԹԵԱՆ ԶԳԵՍՏՈՒՑՆ

Եկեսցեն առաջի սրբոյ սեղանոյն

Ի՛ քահանայն յուսացեալ զձեռս՝ ասելով Սաղմոս ԽԵ։

Լուացիլ սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քո Տէր։

Սարկաւագն։

Դատ արա ինձ Տէր, զի ես յամբծութեան. և այլն։

Տուն առ տուն պիտոյն 'ի լման։

Քահանայն։

Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին՝ Տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ։

Սարկաւագն։

Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր 'ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի, և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Քահանայն։

Ընկալ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քոյ, և աղաչանօք ամենայն սրբոց քոց, (և որոց այսօր է յիշատակ). լուր մեզ Տէր և ողորմեա, ներեա, քաւեա, և թող զմեղս մեր։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սուրբ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ապա խոնարհեալ պատարագիչ քահանայն առաջի այլոց քահանայիցն առընթեր կացելոցն՝ ասէ։

Խոստովանիմ առաջի Աստուծոյ և սրբուհւոյ Աստուածածնին, և առաջի ամենայն սրբոց. և առաջի ձեր՝ հաւք և եղբարք, զամենայն մեղս զոր գործեալ եմ։ Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով, և ամենայն մեղօք՝ զոր գործէն մարդիկ. մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն։

Պապասխանէն որ մերձն է։

Ողորմեսցի քեզ Աստուած հզօրն, և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն և այժմուս. և յառաջիկայէն փրկեսցէ զքեզ, և հաստատեսցէ յամենայն գործս բարիս, և հանգուսցէ զքեզ՝ի հանդերձեալ կեանս. Ամէն։

Պապասխանէսցէ և մնացեալն։

Աղաւթեսցէ և զձեզ մարդասէրն Աստուած, և թողցէ զամենայն յանցանս ձեր։ Տայցէ ժամանակ

ապաշխարելոյ և գործելոյ զբարիս։ Ուղղեսցէ և զառաջիկայ կեանս ձեր՝ շնորհօք սուրբ հոգւոյն հզօրն և ողորմածն, և նմա փառք յաւիտեանս. Ամէն։

Դպիրքն։

Յիշեսջիր զմեզ առաջի անմահ գառին Աստուծոյ։

Քահանայն։

Յիշեալ լինիք առաջի անմահ գառին Աստուծոյ։

Դպիրքն։ Սաղմոս ՂԸ. ֆոխ։

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, և այլն։

Սարկաւագն խաչողէ։

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ՝ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

Քահանայն։

Ի մեջ տաճարիս և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբն նշանացս և սուրբ տեղւոյս, խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք, զսուրբ, զհրաշալի և զյաղթող զտէրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք։ Եւ քեզ մատուցանեմք զշնորհութիւն և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Քահանայն. սաղ. խբ.

Կյորդ:

Մտից առաջն սեղանոյ, և այլն:

Փոխ:

Դատ արա ինձ Աստուած, և այլն:

Տուն առ պոռն զքոնն 'ի լման:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Օրհնեսցուք զՀայրն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջ փառաբանութեան, և երգել զերգս հոգևորս. ամենակալ տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Քահանայն:

Ի յարկի սրբութեան և 'ի տեղւոջ փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս, առաջն աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. զսուրբ, զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Իսկ երբ եպիսկոպոս չիցի խորհրդածուն, առցէ զաւարդ կոնդակեռն, և ածցէ 'ի վերայ շանչացն և զպատուական եմիփորոնն, և եկեցեն առընթեր ընծայարան սեղանոյն, շուացեալ զձեռս:

Եւ մատուցեալ առաջի սեղանոյն, շուռ և անմռունչ ասասցէ զաղօթս առ սուրբ հոգին տեսորինիչ գործոյն:

Ամենակալ բարերար մարդասէր Աստուած բոլորից, յօրինող երևութիցս և աներևութիցս, փրկիչ և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հզօր հոգի. հայցեմք բազկատարած մաղթանաց դոչմամբ հեծութեան՝ յանդիման եղեալ քեզ աղաւորիդ: Մատչիմք մեծաւ դողութեամբ, սաստիկ երկիւղիւ, մատուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում անզնին զօրութեանդ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի՝ Հայրենի անկասկած պատուոյդ, և քննողի ծածկութեան խորոց խորհրդոց՝ ամենակատար կամաց հօրդ Եմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի: Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երբեակ անձնաւորութիւն միասնական աստուածութեանդ, յորոց մի և դու Ձանաչիս անհաս: Քեզ և 'ի ձեռն քո՝ առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալսն և զգալոցսն անստուերաբաբ բարբառով բանի վերապատմեցին. հոգի Աստուծոյ քարոզեալ զքեզ Մովսէսի, որ 'ի գնալն քո 'ի վերայ ջրոցն անպարագիր զօրութիւն, ահեղ շրջարկութեամբ տածողականաւ, թևապարփակ պաշտպանողօրէն գթասիրեալ 'ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր: Յոր կերպարան օրինակութեան՝ նախ քան զկառուցանել զլոյծդ մածուած վերջնում վարագուրիդ, յօրինեցեր կարող տիրապէս

զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից՝ յանէից։ Քեւ ստեղծանին 'ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ 'ի քէն, յայնմ ժամանակի՝ որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր առաջին՝ երկրին կենդանեաց։ Քեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն որպէս հօրն իւրում; ազգակիցն քո՝ էակիցն հօր անդրանիկն որդի՝ մերովս կերպիւ. զքեզ աւետարանեաց Ճշմարիտ Աստուած՝ հաւասար և համագոյ հօր իւր հզօրի. և զառ 'ի քեզ հայհոյութիւնն՝ անքաւելի քարոզեաց, և իբր զաստուածամարտիցն՝ զքո հեստելոցն չարաբանական բերանս կարկեաց. և զիւրն շնորհեաց՝ արդարն և անարատն գտիչն ամենայնի. որ վասն մեզաց մերոց մատնեցաւ, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Նմա փառք 'ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ հօր ամենակալի, յաւիտենից յաւիտեանս. Ամէն։

Դարձեալ կրկնեցի 'ի նոյն կարգ բանի, մինչև փառաւորիւնն յոտոյ հրաշապէս յայտնեցի ազգեալ աւետարանիդ վերստին զկրկին խաղաղութիւն։

Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ՝ զփառաւորեալ արարչութիւնդ, անեղծ և անստեղծ, անժամանակ հոգւոյդ դթածի, որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութիւնս՝ առ ողորմածդ հայր, որ զսուրբս պահես և զմեղուցեալս մաքրես, և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրեալդ հօր։ Ամէն՝ ազատեա զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան. և մի շինցին առ 'ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից և ընտիր վարուց

խնկելոց։ Եւ քանզի մինդ յերրորդութենէդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ, իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեվանս պատուականս ամենայն պատրաստութեամբ 'ի վայելումն Ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեանն։ Եւ հալեսցի 'ի հրոյս յայսմանէ գայթակղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն՝ 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի ամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս որդւովդ Աստուծոյ՝ հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն՝ արդարոցն երանութեան։ Ամէն, այո, և ես մի եմ 'ի նոցանէ, և զիս ընկալ ընդ նոսին, իբր մարգասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ստացեալս։ Զի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո աստուածութիւնդ, ընդ հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամ, և 'ի մի իշխանութիւն գովութեան։

Ի յոյն։

Զի քո է գթութիւն և կարողութիւն և մարդասիրութիւն, զօրութիւն և փառք, յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ապա յարուցեալ եկեցէ առ ընծայարան սեղանոյն, առ որ մատուցեալ նախասարկաւագն զնշխարն, զոր առեալ քահանայն դիցէ 'ի մաղմայն, ասելով։

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ե՝ առնալ զգինին արկցէ խաչանիշ 'ի սկիհն։ Նոյնպէս և սակաւիկ մի ջուր արկցէ, ասելով։

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան տեառն Աստուծոյ, և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ե՝ ասասցէ զաղօթս 'ի ծածուկ՝ Յովհաննու Ոսկեբերանին։

Աստուած Աստուած մեր, որ զերկնաւոր հացդ, զտէր մեր Յիսուս Քրիստոս, զկերակուրդ ամենայն աշխարհի՝ առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար, օրհնել և սրբել զմեզ։ Ինքնին դու Տէր օրհնեա և այժմ զառաջադրութիւնս զայս։ Ընկալ զսա յերկնային քո սեղանդ։ Յիշեա որպէս բարերար և մարդասէր զմատուցօղս, և վասն որոյ մատուցանի։ Եւ զմեզ անդատապարտ պահեա 'ի քահանայագործութիւն աստուածային խորհրդոց քոց։ Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծ-վայելչութիւն փառացդ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե՝ սխօղէսցէ սուրբ։

Տէր թագաւորեաց, զվայելչութիւն. և այլն։

Ե՝ արկցէ խունկ սուրբ։

Խունկ մատուցանեմ առաջի քո Քրիստոս Աստուած՝ բուրումն հոգևորական։ Ընկալ 'ի սուրբ յերկնային և յիմանալի քո մատուցարանդ՝ 'ի հոտ անուշից։ Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս և զպարգևս հոգւոյդ սրբոյ։ Եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե՝ երիցս երկրպագեալ քահանայն, համբուրեսցէ զսեղանն։ Ե՝ սարկաւագն կացեալ 'ի մէջ տաճարին, ձայնեսցէ ասելով։

Օրհնեա տէր։

Ե՝ քահանայն 'ի ձայն ասասցէ։

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե՝ սկսցին այլ եկեղեցականքն ժամանոցս ըստ պատշաճի աւուրն։

Ե՝ յաւարտեալն երգոյն քարոզէ սարկաւագն։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Ժողովուրդն։ Տէր ողորմեա։
Սարկաւագն։ Կեցո և ողորմեա։
Ժողովուրդն։ Կեցո տէր։
Սարկաւագն։ Օրհնեա տէր։

Ե՝ քահանայն ասասցէ զաղօթս։

Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է և փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է և գթութիւնդ անբաւ. դու ըստ առատ մարդասիրութեան քում, նայեա 'ի ժողովուրդս քո և 'ի տաճարս յայս սուրբ. և արա ընդ մեզ և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո և զգթութիւն։ Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Քահանայն աստուծէ խորհրդաբար։

Տէր Աստուած մեր, կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քո պահեա. սրբեա զսոսա՝ որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով, և մի թողուր զյուսացեալքս 'ի քեզ։ Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգևել խոստացար, դու և այժմ զծառայից քոց խնդրուածս՝ առ 'ի յօգուտն կատարեա, շնորհելով յայսմ յաւիտենիս զգիտութիւն քումդ Ճշմարտութեան, և 'ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականսն պարգևելով։ Զի բարերար և մարդասէր ես Աստուած, և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ապա ասացի շարական ըստ պատշաճի առուրն։
Եւ 'ի միջին տանն կրթիցեն առաջի բեմին, և երկրպագցեն երիցս։

Ե- քահանայն աստուծէ աղօթս։

Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս ըզդասս և զինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց 'ի սպասաւորութիւն փառաց քոց, արա այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոյ հրեշտակաց,

և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քումդ բարերարութեան։

Ի յայն։

Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն։

Եւ համբուրեսցեն զսեղանն, և յառաջնումն շարականին՝ գոչեսցէ սարկաւագն։

Պռօսխումէ։

Ե- աստուծէն ողորմութեան յայնէ-։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, ողորմեա մեզ։

Ե- քահանայն ղոյժ ամին աստուծէ 'ի ծածո-ի աղօթս։

Աստուած սուրբ, որ 'ի սուրբս հանգուցեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, և քերովբէք փառաբանեն, և ամենայն երկնային զօրութիւնքն քեզ երկիր պագանեն. որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամենայն արարածս. որ արարեր ըզմարդն ըստ պատկերի քումմ և նմանութեան, և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զզգօնութիւն. և ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր 'ի վերայ նորա զապաշխարութիւն փրկութեան. որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայքս քո 'ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, և զօրինաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ. դու Տէր ընկալ 'ի բերանոյ մեղաւորացս

զերեքսրբեան օրհնութիւնս, և պահեա զմեզ քո-
յին քաղցրութեամբդ։ Թո՛ղ մեզ զամենայն յան-
ցանս մեր՝ զկամայ և զակամայ։ Սրբեա զհոգի, զմիտս
և զմարմինս մեր, և շնորհեա 'ի սրբութեան պաշ-
տել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց. բարե-
խօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին և ամե-
նայն սրբոց քոց, որք յաւիտենից քեզ բարեհաճե-
ցան։ Զի սուրբ ես տէր Աստուած մեր, և քեզ
վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե- սարկա-ագն հարոյկոյէ։

Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեսցուք։
Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և այլն։

Սարկա-ագն հայնէսոյէ։

Օրհնեա տէր։

Ե- հահանայն բաղկապարած ասասոյէ 'ի ծածո-ի ղաղօնս։

Տէր Աստուած մեր, զբաղկատարած զաղաչանս
ծառայից քոց վերընկալցիս, և ողորմեսցիս ըստ մե-
ծի ողորմութեան քում. զգթութիւն քո առաքեա
'ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս, որք ակն
ունին առ 'ի քէն առատ ողորմութեանդ։

Ի հայն։

Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով.
և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ,
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե։ քահանայն նստոցի յատուկանն։ Ե։ սկսցին սաղմոս կցորդ,
ըստ խորհրդոյ աւուրն։ Ե։ ընթերցցին զգիրս մարգարէականս
և զառաքելականս։ Ե։ զկնի ալէլույ՝ ըստ ցուցանելոյ ընթերցուա-
ծոյն։ Ե։ յաւարտեանն սարկաւագն բարձր ձայնիւ գոչեսցէ։

Օրթի։

Քահանայն դարձցի 'ի խորանին, և խաչակնքեսցէ 'ի վերայ
ժողովրդեանն, և ասասցէ։

Խաղաղութիւն + ընդ ամենեսեան։

Ժողովրդն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկա-ագն։ Երկիւղածութեամբ լուարուք։

Սարկա-ագն։

Սրբոյ աւետարանիս որ ըստ Մատթէոսի։

Ժողովրդն։ Փառք քեզ տէր Աստուած մեր։
Սարկա-ագն։ Պռօսխուն։
Ժողովրդն։ Սէր Աստուած։

Ե։ սարկաւագն ընթերցցի զաւետարանն. և յաւարտն
ասասցեն ամենեքեան։

Փառք քեզ տէր Աստուած մեր։

Ե- ասասոյէն ղհա-ապամդն։

Հաւատամք 'ի մի Աստուած հայրն ամենակալ,
յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևու-
թից։ Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս, յորդին Աս-
տուծոյ, ծնեալն յԱստուծոյ հօրէ՝ միածին նախ

քան զամենայն յաւիտեանս։ Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ՝ և ոչ արարած։ Նոյն ինքն համագոյակից հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի՝ երևելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ 'ի յերկնից, մարմնացաւ՝ մարդացաւ, ծնաւ կատարեալապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւով սրբով։ Որով էառ մարմին, հոգի, միտք, և զամենայն որ ինչ է 'ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմնով, նստաւ ընդ աջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և 'ի սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ 'ի հօրէ և յորդւոյ բըղխի. որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս. որ էջն 'ի յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ 'ի սուրբսն։ Հաւատամք և 'ի մի միայն յընդհանրական և յառաքելական եկեղեցի։ Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց. 'ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասենն, էր երբեմն՝ յորժամ ոչ էր որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ հոգին, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին Աստուծոյ, և կամ զսուրբ հոգին, և թէ փոփոխելի են կամ այլայլելի, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

Լո՛ւսաւորչին։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ երրորդութեանն և միաստուածութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Ժողովո՛ւրդն։ Ամէն։

Ե՛ռարկա՛ւոփն փարոզեսցէ 'ի յոյն։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։
Ժողովո՛ւրդն։ Տէր ողորմեա։
Սարկա՛ւոփն։ Եւ ևս հաւատով, և այնմ։

Մինչ նորա երգէն, փոքանայն զաղօթս ասէ 'ի ծածո՛ւկ։

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգևաք բարերարութեան քոյ. որ դու քոյին կամաւ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց, խաչի և մահու՝ յաղագս մեղաց մերոց, և պարգևեցեր առատապէս զպարգևս Հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն. հաղորդս արա և զմեզ, տէր, աղաչեմ զքեզ՝ աստուածային պարգևացդ, թողութեան մեղաց և ընդունելութեան Հոգւոյդ սրբոյ։

Ի յոյն։

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Խաղաղութեամբ քով Քրիստոս փրկիչ մեր, որ 'ի վեր է քան զամենայն միտս և զբանս՝ ամրացո զմեզ, և աներկիւղ պահեա յամենայն չարէ։ Հաւասարեա զմեզ ընդ Ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով և Ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն։ Վասն զի ամենասուրբ երրորդութեանդ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս։

Ժողովուրդն։ Ամէն։
Սարկաւագն։ Օրհնեա տէր։

Քահանայն։

Տէր Աստուած օրհնեսցէ ✠ զամենեսեանդ։

Սարկաւագն։ Աղաղմոս ասացէք, և այլն։

Սբ Աստուածածնի ընդ խորհրդեան ա՛ռ՛ն։
Յետ որոյ սարկաւագն յայնեսցէ։

Մի՛ ոք յերեխայից, մի՛ ոք, և այլն։

Դպիրքն եղանակեսցեն։

Մարմին տէրունական, և արիւն, և այլն։

Ե՛ ապա եղանակեսցեն։

Որք ըստ քրովբէիցն, և այլն։

Եւ 'ի սարկաւագացն վերաբերցի սրբազան հացն, և օրհնուրեան բաժակն 'ի սուրբ սեղանն։

Եւ մինչ նոքա երգիցեն, քահանայն խոնարհեսցի առաջի սրբոյ սեղանոյն, և խորհրդաբար աղօթեսցէ 'ի ծածուկ։

Ո՛չ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ՝ մատչիլ 'ի սեղան քո, կամ սպասաւորել արքունական փառաց քոց. քանզի պաշտել զքեզ՝ մեծ և ահաւոր երկնաւոր զօրութեանցն իսկ է։ Սակայն վասն անչափ բարերարութեան քոյ՝ անպարագրելի բանդ հօր եղեր մարդ, և քահանայապետ մեր երևեցար։ Եւ իբր տէր ամենեցուն՝ այսմ սպասաւորութեան և անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ։ Վասն զի դու ես տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց, որ 'ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս՝ սերովբէից տէր, և թագաւոր իսրայէլի։ Որ միայն սուրբ ես, և 'ի սուրբս հանգուցեալ, աղաչեմ զքեզ, միայն բարերար, նայեա յիս 'ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո, և սրբեա զհոգի և զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին։ Եւ բաւականացո զիս զօրութեամբ սուրբ հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս, և քահանայագործել զքո անարատ մարմնիդ, և զպատուական արիւնդ։ Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ մաղթեմ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի մերժեր զիս 'ի ծառայից քոց. այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս՝ յինէն 'ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ։ Վասն զի դու ես՝ որ մատուցանես և մատչիս, ընդունիս և տաս, Քրիստոս Աստուած մեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն հարքդ, և ամենասուրբ և բարերար հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ընծայքն վերաբերեսցին 'ի սեղանն տէրոյ. և քահանայն խնկարկեսցէ 'ի վերայ սեղանոյն. և լուսացէ զձեռս ասելով։

Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և այլն։

Եւ դարձեալ սարկաւագն։

Եւ ես խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Ժողովուրդն։ Տէր ողորմեա։
Սարկաւագն։ Եւ ես հաւատով, և այլն։

Քահանայն՝ թէ սարկաւագ կայցէ 'ի խորհրդեանն, մինչ նա զքարոզն ասիցէ, հաւատարեսցէ զանդանն, և խաչակնքեալ ✠ ընդ ժողովուրդն, բազկատարած կայցէ առաջի սեղանոյն. և ասասցէ 'ի ծածուկ զաղօթս։

Տէր Աստուած զօրութեանց, և արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զընաւս 'ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր. որ և զմեր հողեղէն բնութիւնս այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս. դու տէր, որում պատարագեմք զպատարագիսս, ընկալ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս, և աւարտեա ըզսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ։ Դեղ թողութեան մեղայ պարգևեա Ճաշակողացս զհայս զայս և զբաժակս։

Ի ՀՅՍ։

Շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ հօր՝ միանգամայն և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✠ ամենեցուն։

Ժողովուրդն։ Ամէն, և ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։ Ողջոյն տուք միմեանց, և այլն։

Եւ համբուրեսցեն զքեզանն և զմիմեանս։

Զայնեսցէ սարկաւագն։

Ահիւ կացցուք, երկիւղիւ, և այլն։

Դպիրն։ Առ քեզ Աստուած։
Սարկաւագն։ Պատարագ Քրիստոս մատչի, և այլն։
Դպիրն։ Ողորմութիւն և խաղաղութիւն, և այլն։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ✠ 'ի վերայ ժողովրդեանն, և ասասցէ։

Շնորհք, սէր, և աստուածային սրբարար զօրութիւնն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ՝ եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն։ Ի վեր ընծայեցուցէք, և այլն։
Դպիրն։ Ունիմք առ քեզ տէր ամենակալ։
Սարկաւագն։ Եւ գոհացարուք զտեառնէ, և այլն։
Դպիրն. Արժան և իրաւ։

Քահանայն ձեռնամած աղօթեսցէ 'ի ծածուկ։

Արժան է ստուգապէս և իրաւ ամենայօրդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել ըզքեզ հայր ամենակալ, որ քոյին անքննելի և ա-

բարձակից բանիւդ զանիծիցն բարձեր զկրՀիմն. որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեպհականեաց զՀաւատացեալս 'ի քեզ. և զնեալն բնութեամբ ըստ 'ի կուսէն տնտեսութեան ՀաՀեցաւ բնակիլ 'ի մեզ. և նորագործ աստուածապէս Ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար։ Վասն զի ուրում՝ ոչն Հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարՀուրեալք 'ի փայլակնացայտ և յանմատոյց լուսոյ աստուածութեանդ, եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մերոյ փրկութեան, շնորՀեաց մեզ ընդ երկնայինսն պարել զՀոգեղէն պարս։

Ի ՀայՆ։

Եւ ընդ սերոբէսն և ընդ քերոբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, և Համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին, և ասել։

Սուրբ սուրբ սուրբ, տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառաք քո. օրՀնութիւն 'ի բարձունս. օրՀնեալ որ եկիր և գալոցդ ես անուամբ տեառն. ովսաննա 'ի բարձունս. սուրբ սուրբ սուրբ։



Ո՞Հ թէ ո՛րքան էր սաստկագին կսկիծ կուսին ։
Մինչ տեսանէր զիւր միածին 'ի վիշտ խաչին ։

Քահանայն բազկատարած աղօթեսցէ 'ի Տաճռակ, նորա երգեսցեն ։

Սուրբ ես Ճշմարտապէս և ամենասուրբ. ն-
ո՛վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զքո 'ի մ-
զանբաւ բարեգործութեանդ զեղմունս։ Որ
անդէն իսկ 'ի նախնումն զանկեալն ընդ մեղ-
զանազան եղանակաւ խնամեալ սփոփեցեր՝ մարգ-
գարէիւք, օրինացն տուչութեամբ, քահանայու-
թեամբ և ստուերակերպ երինջոցն մատուցմամբ.
իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ
իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիքն, ետուր
մեզ զորդիդ քո միածին՝ պարտապան և պարտս,
զենումն և օծեալ, գառն և երինաւոր հաց, քահա-
նայապետ և պատարագ։ Վասն զի ինքդ է բաշ-
խօղ, և նոյն ինքդ բաշխի 'ի միջի մերում միշտ ան-
ծախապէս։ Վասն զի եղեալ հաւատեաւ և առանց
ցնորիցն մարդ, և անշփոթ միաւորութեամբ մար-
մնացեալ յաստուածածին և 'ի սուրբ կուսէն Մա-
րիամայ, Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս
մարդկային կենցաղոյս՝ առանց մեղաց. և յաշխար-
հակեցոյց և յառիթն փրկութեան մերոյ եկեալ
կամաւ 'ի խաչն։

Սդեալ զհացն 'ի սուրբ, յաստուածային, յանա-
բատ և 'ի պատուական ձեռս իւր,

Օրհ ✠ նեաց, գոհացաւ, եբեկ, եւ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն, ասելով.

Առէք կերէք

այս է մարմին իմ.

Որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Նոյնպէս և զբաժակն առեալ,

Օրհ ✠ նեաց, գոհացաւ, էարբ, եւ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն, ասելով.

Արբէք 'ի սմանէ ամենեքեան.

այս է արիւն իմ, նորոյ ուխտի.

Որ յաղագս ձեր, և բազմաց հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Եւ զսոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար որդիդ քո միածին։ Եւ իջեալ 'ի ստորին վայրս մահու՝ մարմնո

Քահանայն խոնարհեսցէ և ասասցէ։

Երկիրպագանեմք և աղաչեմք և խնդրեմք 'ի քէն բարերար Աստուած, առաքեա 'ի մեզ, և յառաջի եդեալ յընծայս յայս՝ զմշտնջենաւորակից քո և զեկակից սուրբ Հոգւոդ։

Եւ կանգնեալ խաչակնչեսցէ զընծայսն՝ ասելով 'ի ցած։

Որով զհաց օրհ ✠ նեալ մարմին Ճշմարտապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Որով զհաց օրհ ✠ նեալ մարմին Ճշմարտապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Որով զհաց օրհ ✠ նեալ մարմին Ճշմարտապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Եւ զբաժակ օրհ ✠ նեալ արիւն ստուգապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Եւ զբաժակ օրհ ✠ նեալ արիւն ստուգապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Եւ զբաժակ օրհ ✠ նեալ արիւն ստուգապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։

Որով զհաց և զգինի օրհ ✠ նեալ մարմին և արիւն Ճշմարտապէս արարեր տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ փոխարկելով Հոգւովդ քով սրբով։

Երիցս անգամ հրկնեսցէ զաղօթս. Եւ սարկաւագն 'ի ցած. Ամէն։

Եւ քահանայն ասասցէ 'ի ձայն։

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Եւ ապա պարծեալ ցէջեաս աղօթեսցէ 'ի ծածուկ։

Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն և զբաղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց, և որք 'ի պատերազմունս բարբարոսաց։

Սովաւ և օդոց շնորհեա զբարեխառնութիւն, և անդոց զպտղաբերութիւն, և ախտացելոց 'ի պէս-պէս ցաւս փութապէս զառողջութիւն։

Սովաւ հանգո զամենեսեան յառաջագոյն 'ի Քրիստոս զննջեցեալսն, զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագունս և զբնաւ ուխտ եկեղեցւոյ քումմ սրբոյ, և զամենեսեան՝ որք յաշխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով վախճանեալս։

Ի ձայն։

Ընդ որս և մեզ այդ արասցես՝ բարերար Աստուած աղաչեմք։

Ժողովրդն։ Յիշեա տէր և ողորմեա։

Քահանայն։

Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամու, և Յովհաննու մկրտչին, Ստեփանոսի նախավկային, և ա-

մենայն սրբոց՝ Եղկցի յիշատակ 'ի սուրբ պատարագս, աղաչեմք։

Ժողովուրդն։ Յիշեա տէր և ողորմեա։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն՝ ձեռնամած ասասցէ։

Առաքելոց սրբոց, մարգարէից, և այլն։

Եւ մինչ սարկաւագն զբարոզն ասիցէ, քահանայն զաղօթս սկսցի. զի 'ի միասին աւարտեսցեն։

Յիշեա Տէր և ողորմեա և օրհնեա՝ զսուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ, և աղատեցեր խաչիւն սրբով. շնորհեա սմա զանշարժ ըզխաղաղութիւն։

Յիշեա տէր և ողորմեա և օրհնեա զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն 'ի մեզ զբանն Ճշմարտութեան։

Ամա յետ յիշելոյն զՊապն, յիշիցի նա առաջնորդն տեղւոյն ըստ պատշաճի և պատուոյն, թէ Պատրիարգ իցէ, թէ Արքեպիսկոպոս իցէ, և թէ Եպիսկոպոս իցէ։ Բայց Կաթուղիկոսն, և կամ Եպիսկոպոսն Հայոց՝ եթէ իցէ հերետիկոս կամ հերձուածող՝ ոչ երբեք և ոչ ուրեք յիշիցի։ Իսկ եթէ իցէ ուղղափառ, յիշիցի միայն 'ի բեմի և 'ի վիճակի իւրում, և ոչ երբեք արտաքոյ նորին։

Ի ֆայն։

Եւ առաւել զսրբազան Պապն մեր՝ զտէր այս անուն. և զերջանիկ պատրիարգն մեր՝ զտէր այս անուն. կամ զարքեպիսկոպոսն մեր՝ զտէր այս անուն. կամ զեպիսկոպոսն մեր՝ զտէր այս անուն. շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ։

Եւ ապա 'ի ձախակողմն սեղանոյն քարոզեսցէ սարկաւագն ձեռով աղօթից։ Զոր մի ոք մտացածին կարծելով շրջեսցէ, զի մեծին խոսրովու է ասացեալ զառաջնոց օրինացն։

Գոհութիւն և փառաբանութիւն, և այլն։

Եւ ընդ սկսանիլ սարկաւագին զքարոզս, քահանայն զաղօթս սկսցի, զի 'ի միասին աւարտեսցեն։

Յիշեա տէր և ողորմեա և օրհնեա՝ զքո առաջի կացեալ ժողովուրդս, և զպատարագիս մատուցօղս, և պարգևեա սոցա զպիտոյն և զօգտակարն։

Յիշեա տէր և ողորմեա և օրհնեա՝ զուխտաւորս և զպտղաբերիչս եկեղեցւոյ քոյ սրբոյ, և որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ. և հատո նոցա ըզպարտս նոցա՝ ըստ ընդաբոյս առատութեան քոյ՝ հարիւրապատիկ ատա և 'ի հանդերձելումդ։

Յիշեա տէր և ողորմեա, և գթա 'ի հոգիս հանգուցելոցն, հանգո զնոսին, և լուսաւորեա և դասաւորեա ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից, և արժանի արա ողորմութեան քում։

Յիշեա տէր և զհոգի ծառայի քո այս անուն. և ողորմեա նմա ըստ մեծի ողորմութեան քում, և հանգո այցելութեամբ 'ի լոյս երեսաց քոց։ Եթէ կենդանի է, փրկեա զնա յամենայն որոգայթից հոգւոյ և մարմնոյ։

Յիշեա տէր և զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս՝ զկենդանիս և զհանգուցեալս. կառավարեա զկամս հայցմանց նոցա և զմերս՝ ընդ ուղղորդն, և որ լինի է փրկութեամբ։ Եւ վարձատրեա բոլորեցունց զանանց և զերանելի բարու-

թիւնդ։ Եւ զտեալ զխորհուրդս մեր՝ տաճարացո յընդունակութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Ընդ որում քեզ հօր ամենակալի, հանդերձ կենդանարար և աղատիչ սուրբ Հոգւովդ՝ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Քահանայն դարձեալ՝ խաչակնքեսցէ զԺողովուրդն՝ ասելով բարձր։

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ, և փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի + ընդ ձեզ ընդ ամենեսեան։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն։ Եւ ևս խաղաղութեան, և այլն։
Ժողովուրդն։ Տէր ողորմեա։
Սարկաւագն։ Ամենայն սրբովք զորս, և այլն։

Եւ անդէն ընդ խորանն՝ քահանայն բաղկապարած խորհրդաբար աղօթեսցէ՝ ի ծածուկ։

Աստուած ճշմարտութեան, և հայր ողորմութեան, գոհանամք զքէն, որ՝ի վերս քան զերանելի նահապետացն՝ զմեր պարտաւորեցեալսս առաւել մեծարեցեր զընութիւն։ Վասն զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ հայր հաճեցար անուանիլ գթալով։ Եւ այժմ, Տէր, աղաչեմք զքեզ՝ զայսպիսի առ՝ի քէն զնորոգ և զպատուական անուանադրութեանս զնորն՝ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՝ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ։

Ի ֆայն։

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ երկնաւորդ հայր, երգել և ասել։

Ե՛ Ժողովուրդն բաղկապարած եղանակեսցէն։

Հայր մեր, որ յերկինս ես, և այլն։

Ե՛ մինչ նոքա երգեսցեն՝ քահանայն աղօթեսցէ՝ ի ծածուկ։

Տէր տերանց, Աստուած աստուածոց, թագաւոր յաւիտենական, արարիչ ամենայն արարածոց, հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի՛ տար զմեզ՝ի փորձութիւն, այլ փրկեա՝ի չարէ, և ապրեցո՝ի փորձութենէ։

Ի ֆայն։

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն։

Քահանայն։

Խաղաղութիւն + ընդ ամենեսեան։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն։ Աստուծոյ երկրպագեսցուք։
Ժողովուրդն։ Աւաջի քոյ տէր։

Քահանայն խոնարհեսցի և ամենայն ժողովուրդն ընդ նմա՝ի վայր. և քահանայն աղօթեսցէ՝ ի ծածուկ։

Որ աղբիւրդ ես կենաց, և բղխումն ողորմութեան, Հոգիդ սուրբ, ողորմեա ժողովրդեանս, որք

խոնարհեալ երկիրպագանեն աստուածութեանդ քոյ։ Պահեա զսոսա ամբողջս. տպաւորեա յոգւոջ սոցա զձև մարմնոյ ցուցակի՝ առ 'ի ժառանգութիւն և 'ի վերնակ հանդերձելոցդ բարեաց։

Ի յայն։

Քրիստոսիս Յիսուսիս տերամբ մերով, ընդ որում քեզ հոգւոյդ սրբոյ և հօր ամենակալն վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե- Հաւանայն առեալ զսո-րբ հայն 'ի յեռս, սարկա-ւագն յայնեսոյն բարձր։

Պռօսխումէ։

Ե- Հաւանայն բարձրացո-սոյնս ամենեքս- ժողովրդեանն՝ և ասասցէ։

Ի սրբութիւն սրբոյ։

Ժողով-ուրդն բարձր յայնէ-։

Միայն սուրբ, միայն տէր, Յիսուս Քրիստոս, 'ի փառս Աստուծոյ հօր. Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ հայր սուրբ Աստուած Աշխարհիս։
Ժողով-ուրդն։ Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ որդիդ սուրբ Աստուած Աշխարհիս։
Ժողով-ուրդն։ Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ հոգիդ սուրբ Աստուած Աշխարհիս։
Ժողով-ուրդն։ Ամէն։

Քահանայն։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Դպիրն։ Հայր սուրբ, որդի սուրբ, և այլն։

Ե- Դնել նոյա երդիցեն ղայս, Հաւանայն խոնարհեսցի, և աղօթեսցէ 'ի ծածո-ւկ։

Նայեաց տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից 'ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քո։ Եկ 'ի սրբել և 'ի կեցուցանել զմեզ, որ ընդ հօր նստիս, և աստ պատարագիս։ Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ, և 'ի պատուական յարենէ. և 'ի ձեռս մեր ամենայն ժողովրդեանս։

Ե- զայս ասացեալ երիրպագեսցէ և համբո-ւրեսցէ զսեղանն, և առեալ զսո-րբ մարմնոյն ողջ բացցէ յանապական արեանն, և ասասցէ։

Տէր Աստուած մեր, որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քոյ քրիստոնեայս, և շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւազանաւն 'ի թողութիւն մեղաց, և արժանի արարեր զմեզ հաղորդել սուրբ մարմնոյ և արեան միածնի քոյ. և այժմ աղաչեմք զքեզ տէր, արա զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն։

Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և սուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ բարէբաղձանք ակնարկ ծողովրդեանն, և ասասցէ առ նոսա բարէր։

Ի սուրբ 'ի սուրբ պատուական մարմնոյ և յարենէ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, Ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ 'ի յերկնից բաշխի 'ի միջի մերում։ Սա է կեանք ✝, յոյս, յարութիւն, քաւութիւն և թողութիւն մեղաց։ Սաղմոս ասացէք տեառն Աստուծոյ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի 'ի կառս քերովբէականս։

Սարկաւագն հայնէսցէ բարէր։

Սաղմոս ասացէք տեառն Աստուծոյ, և այլն։

Դպիրքն եղանակեսցեն։

Քրիստոս պատարագեալ բաշխի, և այլն։

Մինչ նոքա երգեցեն, քահանայն առցէ զմարմնոն 'ի յեռն, և համբուրեսցէ արքասուրս, ասելով զայս։

Զոր օրհնութիւն, կամ զոր գոհութիւն 'ի վերայ հացիս և բաժակիս ասացուք. այլ Յիսուս ըզքեզ միայն օրհնեմք հանդերձ հարբդ և ամենասուրբ հոգւովդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Դարձեալ ասասցէ։

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես Քրիստոս որդի Աստուծոյ, որ բարձեր զմեղս աշխարհի։

Եւ բեկեալ արկցէ 'ի բաժակն արեան՝ ասելով։

Լրումն հոգւոյն սրբոյ։

Եւ ապա առեալ զմ մասն 'ի յեռս իւր, ասասցէ 'ի ծածուկ արքասուրս ✝ գոհութեամբ առ Հայր։

Հայր սուրբ, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քոյ, և լուսաւորեցեր մկրտութեամբ հոգևոր աւազանին։ Արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ 'ի մեղաց թողութիւն։ Տպաւորեա 'ի մեզ զշնորհս հոգւոյդ սրբոյ, որպէս 'ի սուրբ առաքեալսն, որք Ճաշակեցին, և եղեն մաքրիչք ամենայն աշխարհի։ Եւ արդ, տէր Հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մատնաւորեա Ճաշակման երեկոյին աշակերտացն՝ բառնալով զխաւար մեղաց իմոց։ Մի՛ հայիր յանարժանութիւնս իմ, և մի՛ արգելուր զշնորհս հոգւոյդ սրբոյ. այլ ըստ անբաւ մարդասիրութեան քոյ՝ պարգևեա զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց. որպէս խոստացար և ասաց տէր մեր Յիսուս Քրիստոս, թէ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեանս։ Արդ արա զսա մեզ 'ի քաւութիւն, զի որք կերիցեն և արբցեն 'ի սմանէ, հանցեն զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✝ ընդ ամենեսեան։

Գոհանամ զքեզ Քրիստոս թագաւոր, որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդիլ սուրբ մարմնոյ և արեան քոյ։ Եւ այժմ տէր աղաչեմ ըզ-

քեզ, մի լեցի սա ինձ 'ի դատապարտութիւն, այլ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ և մարմնոյ, և 'ի կատարումն ամենայն գործոյ առաքինութեան։ Որպէս զի սրբեսցէ սա զշունչս իմ, զհոգի և զմարմին իմ, և արասցէ զիս տաճար և բնակարան ամենասուրբ Երրորդութեանդ։ Զի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Յովհաննու Ոսկեբերանէն։

Գոհանամ և մեծացուցանեմ և փառաւորեմ զքեզ տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուրս յայսմիկ՝ հաղորդակից լինել աստուածային և սոսկալի խորհրդոյ քոյ, անարատ մարմնոյդ և պատուական արեանդ։ Վասն այսորիկ զսոսա 'ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ զամենայն աւուրս և 'ի ժամանակս կենաց իմոց՝ ընդ սրբութեան քոյ պահեա զիս։ Որպէս զի յիշելով զբարեգթութիւնս քո, և կենդանի լինել ընդ քեզ, որ վասն մեր չարչարեցար և մեռար և յարեար։ Մի մերձեսցի, տէր իմ և Աստուած, խորտակիչն՝ կնքելով անձին իմոյ պատուական արեամբդ քով։ Ամենակարող՝ մաքրեա զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ։ Ամրացո զկեանս իմ, Տէր, յամենայն փորձութենէ. և չպատերազմողն իմ դարձո յետս պատկառեալ և ամաչեցեալ, որչափ յառնէ 'ի վերայ իմ։ Ամրացո զզգնացս մտաց և լեզուի իմոյ, և զամենայն ճանապարհս մարմնոյ իմոյ։ Լեր հանապազորդ ընդ իս, ըստ անսուտ խոստմանց քոց, թէ Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցէ և ես 'ի նմա։ Դու ասացեր, մարդասէր, կացո զքանս աստուածային անլուծանելի հրամանաց քոց։ Քանզի

դու ես Աստուած ողորմութեան և գթութեան և մարդասիրութեան, և պարգևիչ ամենայն բարեաց. և քեզ վայել է փառք հանդերձ Հարբդ և ամենասուրբ հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Եւ ապա տեսառնացրեսցէ զինքն, և խնդրեսցէ 'ի ձշմարտեն Աստուծոյ զպէտսն հայցուածս անձին իւրոյ և ժողովրդեան և աշխարհի. և բողոքիւն խնդրեսցէ իւրոց յանցառորացն թշնամեաց և ատելեաց։ Եւ անդեն անիւ և դողոքեսցէ ձաշակեսցէ 'ի մարմնոյն, և արբցէ 'ի բաժակեն՝ ասելով։

Մարմին քո անապական լեսցի + ինձ 'ի կեանս։
Եւ սուրբ արիւն քո 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Եւ դէ սարկաւագ կայցէ, հաղորդեսցի և նա։ Եւ առցէ սարկաւագն զսկիհն, և դարձցի առ ժողովուրդն ասելով բարձր։

Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք։

Ժողովուրդն ասասցէ Բարձր ձայնիւ։

Աստուած մեր և տէր մեր երևեցաւ։

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն, բայց ոչ 'ի բերանն, այլ 'ի յափն տապով զարբուրիւնն։ Եւ ամենայն արժանաւոր ժողովուրդն հաղորդեսցին։ Եւ յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն, և ասասցէ բարձր։

Կեցո տէր + զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովուեա և բարձրացո զսոսա՝ յայսմհետէ մինչև յաւիտեանս։

Ե՝ յեր հաղորդութեանն երգեսցեն ժողովուրդն։

Լցաք 'ի բարութեանց քոց, և այլն։

Քահանայն։

Գոհանամք զքէն, հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի սուրբ երրորդութիւնդ։ Ալելուիա։

Գոհանամք զքէն, Քրիստոս Թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութիւն՝ կենարար մարմնով և արեամբդ քով սրբով։ Ալելուիա։

Գոհանամք զքէն, Հոգիդ Ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի. անարատ պահեա հաւատով երրորդութեանդ՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան։ Ալելուիա։

Սարկաւագն։ Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։ Եւ ևս հաւատով ընկալ, և այլն։

Ժողովուրդն։ Գոհանամք զքէն, և այլն։

Ե՝ քահանայն ասասցէ 'ի ծածուկ։

Գոհանամք զքէն Քրիստոս Աստուած, որ զայսպիսի Ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ 'ի սրբութիւն կենդանութեան։ Սովիմք պահեա զմեզ սուրբս և անարատս՝ բնակեալ զմեօք քո աստուածային խնամօքդ։ Հովուեա զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց և բարերարաց։ Որով ամրացեալք յամենայն բանսարկուին ընդդիմութեանց, քումդ ևեթ արժանի եղեալք լսել ձայնի, և քեզ միայնոյ քաջալաղթ և Ճշմարիտ հովուիդ հետևել, և առ 'ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից, Աստուած մեր և տէր և

փրկիչ Յիսուս Քրիստոս. որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Խաղաղութիւն ✠ ընդ ամենեսեան։

Անքննին, անհաս, երրեակ ինքնութեանդ, հաստիչ, ընդունող և անքաժանելի միասնական սուրբ երրորդութեանդ, վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե՝ ապա առցէ զաւետարանն սուրբ 'ի ձեռն իւր, և երկրպագեալ համբուրեսցէ զանդանն։ Ե՝ իջեալ 'ի մէջ եկեղեցւոյն, ասասցէ զաղօթս։

Ի յայն։

Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ տէր, և սուրբ առնես զյուսացեալս 'ի քեզ, կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո. զբուսն եկեղեցւոյ քոյ պահեա։ Սրբեա զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով, և մի թողուր զյուսացեալս 'ի քեզ։ Զխաղաղութիւն քո պարգևեա ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից, և զինուորեալ մանկանց նոցա, և ամենայն ժողովրդեանս։ Զի ամենայն տուրք բարիք, և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստ են ի ջեալ՝ առ 'ի քէն, որ ես հայր լուսոյ։ Եւ քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ե՝ ժողովուրդն ասասցէն երէ՛ անգամ։

Եղիցի անուն տեառն օրհնեալ, և այլն։

Ե՝ Քահանայն դարձցի առ ժողովուրդն, և ասասցէ
'ի ձայն։

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես՝ Քրիս-
տոս Աստուած փրկիչ մեր. որ լցեր զամենայն հայ-
բակամ տնօրէնութիւնս քո, լոյս և զմեզ հոգւովդ
քով սրբով։

Սարկաւագն. Օրթի։

Քահանայն։

Խաղաղութիւն + ամենեցուն։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Սարկաւագն։ Երկիւղածութեամբ լուարուք։

ՍՐԲՈՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Ի Հօրէն լուսոյ

Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն։ Նա էր 'ի սկզբանէ առ Աստուած։ Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղ'և և ոչինչ՝ որ ինչ եղևն։ Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան. և լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու։ Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս։ Սա եկն 'ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։ Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհս։ Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև, և աշխարհ զնա ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան։ Իսկ որք ընկալանն զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա. որք ոչ յարենէ և ոչ 'ի կամաց մարմնոյ և ոչ 'ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։ Եւ բանն մարմին եղև, և բնակեաց 'ի մեզ. և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զմիածնի առ 'ի հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ։

ՍՐԲՈՅ ԱՌԵՏԱՐԱՆԻՍ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յետ յարութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրև Հաշէցին, ասէ ցՍիմոն Պետրոս Յիսուս. Սիմոն յովհաննու սիրէս զիս առաւել քան զդոսա։ Ասէ ցնա. այո տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ. ասէ ցնա՝ արածեա զգառինս իմ։ Դարձեալ ասէ ցնա։ Սիմոն յովհաննու սիրէս զիս։ Ասէ ցնա. այո տէր, և դու գիտես, զի սիրեմ զքեզ. ասէ ցնա՝ արածեա զոչխարս իմ։ Ասէ ցնա երիցս անգամ։ Սիմոն յովհաննու սիրէս զիս. տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս՝ թէ սիրէս զիս. և ասէ ցնա. տէր՝ դու զամենայն գիտես, և դու իսկ զամենայն Հանաչես, և եթէ սիրեմ զքեզ. ասէ ցնա Յիսուս՝ արածեա զոչխարս իմ։ Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր, և երթայիր յո՛ և կամէիր. և յորժամ ծերասցիս՝ ձեռս 'ի վեր կալցես, և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին՝ ուր ոչն կամիցիս։ Զայս ասաց՝ նշանակեալ թէ որո՛վ մահու փառաւորառնիցէ զԱստուած։ Եւ զայս իբրև ասաց, ասէ ցնա. Նէ զկնի իմ։

Սարկաւագն։ Սուրբ խաչիւս աղաչեսցուք, և այլն։

Քահանայն։

Պահպանեա զԺողովուրդս քո Քրիստոս, և այլն։

Ժ-ղովուրդն։ Օրհնեցից զտէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ։

Եւ քահանայն խաչակնքեսցէ զԺողովուրդն, և ասասցէ Բարձր։

Օրհնեալք * եղերուք 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ, և տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան. Ամէն։

Եւ դպիրքն ասասցեն զսաղմոսն ՃԻ։

Ի տէր պարծեսցի անձն իմ, և այլն։

Եւ ընդ սաղմոսին՝ բաշխեսցի Հշխար Ժողովրդեանն։
Եւ յաւարտմանն դարձցի քահանայն յարևելս, երկրպագեսցէ առաջի սրբոյ սեղանոյն, և ասասցէ։

Տէր Աստուած Յիսուս Քրիստոս՝ ողորմեա ինձ։

Եւ մտեալ յաւանդատուն՝ մերկասցի 'ի զգեստուցն։
Եկեալ առաջի սեղանոյն, երկրպագեսցէ երիցս, և երրիցէ խաղաղութեանաւ։

ԱԼԷԼՈՒԻԱՅ·Ք

Աստուածայայտնութեան Ճրագալուցին։

Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո։

Ծն. ա. Այսօր ծնաւ որ 'ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս որդի. որ է օծեալ տէր 'ի քաղաքի դաւթի. 'ի վայելչութիւն սրբոյ քոյ յարդանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։

Սթեփանոսի։

Բ. Հոգւով սրբով զօրացեալ սուրբ Ստեփանոս, և ընտրեալ յորովայնէ, Ճշմարիտ վկայ, սիրող և առաքեալ առաքելոյն, 'ի Քրիստոսէ ընկալար զբարութեանցն զպսակն։

Գ. Կարապետն Յովհաննէս զարհուրեալ յորովայնէ յորովայն երկրպագէր. սպասաւոր եղև բանին Աստուծոյ. և լուեալ զահաւոր զձայնն աղաղակէր ասելով. ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի։

Դ. Ուրախ լեր բերկրեալդ, տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո։

Ե. Դու մանուկ, մարգարէ բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա։

Զ. Եհան զիս 'ի գերոյ տառապանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ։

Է. Երգուաւ տէր դաւթի Ճշմարտութեամբ, և ոչ ստեաց նմա, 'ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա։

Ը. Ուրախ լիցին երկինք, և ցնծասցէ երկիր. զուարճասցի ծով լիւ իւրով, տիեզերք և ամենայն բնակեալքն 'ի նմա։

Ծննդեան Յովհաննու Կարապետին։

Կարապետն Յովհաննէս զարհուրեալ, և այլն։

Տեառնընդառաջին։

Արդ արձակես զծառայս քո տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկիչդ Աստուած։

Ալէլուիայ Ճաշու յինանց։

Հեր. Գովեա Երուսաղէմ զտէր, և օրհնեա զԱստուած քո Սիոն։

Բշ. Գովեա Երուսաղէմ զտէր, և օրհնեա զԱստուած քո Սիոն։

Գշ. Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն, 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

Դշ. Թող վայելէ օրհնութիւն Աստուած 'ի Սիոն, և քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ։

Եշ. Տէր ով կացցէ 'ի խորանի քում, կամ ով բնակեսցի 'ի լեառն սուրբ քո։

Զշ. Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

ՂԲ. Ցնծացէք առ Աստուած օգնականն է մեր, աղաղակեցէք առ Աստուած յակոբայ։

Աղերս-երգ Ճաղոս համբարձման։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ Թագաւոր փառաց։

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և տէր մեր ձայնիւ փողոյ։

Աղերս-երգ Ճաղոս Հոգեւոյն սրբոյ։

Կէր. Ողորմութեամբ տեառն լի եղև երկիր. և բանիւ տեառն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

Էշ. Ձայն տեառն 'ի վերայ ջուրց. և Աստուած փառաց որոտաց, և տէր ինքն 'ի վերայ ջուրց բազմաց։

Ճշ. Որպէս իւղ զի իջանէ 'ի գլուխ և 'ի մորուսն ահարոնի, և 'ի մորուացն իջանէ 'ի գրասպանս զգեստու նորա։

Ճշ. Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ, և սուրբ արար զյարկս իւր բարձրեալն։

Ճշ. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

ՈՒՐ. Ցիշեա տէր զԴաւիթ և զամենայն հեզութիւն նորա։

ՂԲ. Աստուածն գետք, Տէր, և ամբարձին գետք զձայնս իւրեանց. և յարիցեն գետք 'ի գնացս իւրեանց։

Աղերս-երգ Ճաղոս յարութեան։

ԱՅ. Դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

ԱՂ. Օրհնեցէք զտէր յօրհնութիւն 'ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոյ։

ԷՅ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած 'ի ձայն ցնծութեան։

ԷԿ. Արի տէր Աստուած իմ 'ի հրամանս քո, զոր պատուիրեցեր, և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեզ, վասն այսորիկ 'ի բարձունս դարձ տէր։

ԳՅ. Ուրախ եղև Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիոնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց։

ԳԿ. Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որպէս զի ահեղ են խորհրդովք քան զամենայն որդւոց մարդկան։

ԴՅ. Հաճեցար տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։

ԴԿ. Յարեաւ Աստուած, և ցրուեցան ամենայն թշնամիք նորա. փախեան ատելիք նորա յերեսաց նորա։

Աղերս-երգ Ճաղոս Վարդավառին։

ԿԷ. Ամպ լուսաւոր հովանի լինէր նոցա. ձայն եղև յամպոյն որ ասէ. դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։

Էշ. Բարձրութիւնք լերանց նորա են, նորա է ծով և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին. եկայք երկիրպագցուք նմա, անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ։

Ճշ. Քո են երկինք և քո է երկիր, զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր. զՀիւսիս և զՀարաւ դու արարեր. Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն։

Աղերս-երգ Ճաղոս Վերափոխման և պատարագին։

ԿԷ. Արի տէր 'ի հանգիստ քո, դու և տապանակ կտակի սրբութեան քոյ։

Ը։ Ուրախ լեր բերկրեալ, և այլն։
ԿՀ. Ս.յսօր ծնաւ որ 'ի հօրէ, և այլն։
Ճ։ Ուրախ լիցին երկինք, և այլն։

Ս.ԷԼՐ-ԷԱՅՍ ՃԱՂՈՒ ՆԱՒԱԿԱՊԵՑՈՅ ԽԱՂԻ Ի ԵԿԵՂԵՑՈՅ։

ՂԲ. Սիրեաց տէր զՍիովն, և ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, 'ի սմա բնակեցայց, զի հաճեցայ ընդ սա։
Կէր. Տուր զօրութիւն ծառայի քոյ. կեցո զորդի աղախնոյ քոյ, և արա առ իս նշան բարութեան։
Ը։ Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։
Ճ։ Տէր սիրեցի զվայելչութիւն տան քոյ, և զտեղի յարկի փառաց քոց։
Ռ։ Տէր 'ի տաճար սուրբ իւրում, տէր յերկինս յաթոռ իւրում։
Ե։ Որպէս սիրելի են յարկք քո տէր զօրութեանց. ցանկայ և փափաքէ անձն իմ 'ի դաւիթս քո. սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ Աստուած կենդանի։
Որ. Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։
ՂԲ. Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո աջով քո, և լուր մեզ։

Ս.ԷԼՐ-ԷԱՅՍ ՃԱՂՈՒ ԱՌՈՒՐՑ ՊԱՀՈՅ. ՈՐ ԱՍԷՆ ԸՍՊ ՅԱՅՆԻՑ։

ԱՅ. Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։
ԿՀ. Վասն անուան քո տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։
ԱԿ. Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս։

ԲՅ. Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ։
ԲԿ. Դարձ տէր և փրկեա զանձն իմ, կեցո զիս տէր ըստ ողորմութեան քում։
ԳՅ. Վասն անուան քո տէր քաւեա զմեղս իմ՝ զի բազում եղեն յոյժ։
ԳԿ. Ողորմեա ինձ տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ՝ զի խռովեցան ոսկերք իմ։
ԴՅ. Յիշեա տէր զգթութիւնս քո և զողորմութիւնս քո, որք են յաւիտենից։
ԴԿ. Տէր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի անտես առներ։

Ս.ԷԼՐ-ԷԱՅՍ ՇԱԲԱԹԱՊԱՀՈՅ։

Ը։ Եկայք ցնծասցուք 'ի տէր, աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր։
Ճ։ Երգեցէք տեառն երգ նոր, երգեցէք տեառն ամենայն երկիր, երգեցէք տեառն և բարձր արարէք զանուն նորա։
Ե։ Բարձր արարից զընտրեալն 'ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա։

Ս.ԷԼՐ-ԷԱՅՍ ԱՂՕԹՔ ԷՐՈՒԷԷՑ։

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր, ծառայեցէք տեառն ուրախութեամբ։
Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծաներուք զի նա է տէր Աստուած մեր։

Ս.ԷԼՐ-ԷԱՅՍ ՃԱՂՈՒ ՄԱՐՊԷՐՈՍԱՅ։

ԱՅ. Տէր սիրէ զիրաւունս, և ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր, այլ յաւիտեանս պահէ զնոսա։

ԿՀ. Փրկութիւն արդարոց 'ի տեառնէ է. վերակացու է նոցա 'ի ժամանակս նեղութեան։

ՃԿ. Պարծեսցին սուրբքն փառաւք, և ցնծասցեն 'ի հանդիստ իւրեանց, և բարձր արասցեն զԱստուած բերանաւք իւրեանց։

ԿԿ. Լոյս ծագեաց արդարոց, ուղղոց սրտից եղև ուրախութիւն։

ԷՃ. Պարծեսցին սուրբքն փառաւք, և ցնծասցեն 'ի հանդիստ իւրեանց, և բարձր արասցեն զԱստուած բերանաւք իւրեանց։

ԷԿ. Կարդացին արդարքն առ տէր, և տէր լուաւ նոցա. յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա։

ԿՃ. Վասն քո մեռանիմք զօրհնասպաղ, համարեցաք որպէս զոչխար 'ի զենումն։

ԿԿ. Ուրախ լիցին ամենեքեան՝ որք յուսացեալ են 'ի քեզ, յաւիտեան ցնծասցեն և բնակեսցիս դու 'ի նոսա։

ԴՃ. Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին, որպէս զմայրսն լիբանանու բազումք եղիցին։

ԴԿ. Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա տէր, և պահէ զամենայն ոսկերս նոցա, և մի 'ի նոցանէ ոչ կորիցէ։

Աւետարան ճաշու հրեշտակապետաց։

Ողորմութեամբ տեառն լի եղև երկիր, և բանիւ տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

Հոմանէն Մարգարէից։

Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած և զտէր յաղբերացն Իսրայէլի։

Դաւիթ և Յակոբայ։

Երգուաւ տէր Դաւթի ճշմարտութեամբ, և ոչ ստեայ նմա, 'ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա։

Ամենայն առաքելոց։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր, և յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց։

Ընդ ամենայն երկիր եել բարբառ նոցա, և մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Նախահարցն։

Պատմէ զլան իւր Յակոբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի։

Գրիգորի լուսաւորչին։

Համբերելով համբերի տեառն, և նայեցաւ առիս, և լուաւ աղօթից իմոց։

Հայրապետաց և վարդապետաց։

Բահանայք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Ծննդոց։

Երանելի են որք բնակեալ են 'ի տան տեառն, յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։

Կոստանայ։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ, 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Տարցին Թագաւորի կուսանք զՀետ նորա և զընկերս նորա տարցին նմա։

Թագաւորայ։

Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի Թագաւորն, 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

Բառանէին, Ի Երկոայ էր։

Ընդաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հանգիստ։

Մեծի հինգշաբաթի։

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց։

-120.000-

ՀՀ Ազգային գրադարան
NL2059083 III
ՀՀ Ազգային գրադարան
NL2059082 II
ՀՀ Ազգային գրադարան
NL2059081 I

II
21848

II
21849

II
21850